Երեխան և քաղաքականությունը

Անվճար հավելված

2011 հատուկ թողարկում

«Որքան շատ են կանայք խորհրդարանում, այնքան պաշտպանված են երեխաները»,- վկայում է Միջխորհրդարանական միությունը

Էջ 3

SOS-փաստաշար

ՄԱԿ-ի տվյալներով՝ ամեն ժամ աշխարհում սովից մահանում է 700 երեխա

Ի՞նչ անել

Պաշտոնական տվյալներով՝ Հայաստանում աղքատ է երեխաների 38,1%-ը, ծայրահեղ աղքատ՝ 4,5%-ը: Մինչև 5 տարեկան երեխաների շրջանում աղքատության մակարդակը կազմում է 39,6%, իսկ 6-9 տարեկան երեխաների շրջանում՝ 40,5%: Հաշմանդամություն ունեցող երեխաների 70 %-ը աղքատ է:

«Ի՞նչ է անում կառավարությունը, որպեսզի մարդիկ երեխաներին շուտ չքնեցնեն, ինչ է թե՝ հաց չունեն նրանց տալու»,- այս հռետորական հարցը հնչեցրեց վերջերս ԱԺ ամբիոնից պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը:

Ոտնձգություն մանկության նկատմամբ

Հունիսի 1-ի դրությամբ՝ այս տարի ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններում անչափահասների նկատմամբ կատարված հանցագործության 103 դեպք է գրանցվել, որոնցից 24-ը՝ ֆիզիկական բռնության, 25-ը՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված: Անչափահասները բռնության են ենթարկվել թե՛ ընտանիքում՝ հարազատների կողմից, և թե՛ հասարակական վայրերում:

Համեմատության համար նշենք, որ 2009-ին տարվա կտրվածքով գրանցվել էր 110 դեպք, իսկ 2010-ին ՝ 140 դեպք: Մտահոգիչ է, որ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի թիվն աճում է:

Ամեն երեխա երազում է ընտանիքի մասին

Հայաստանի խնամքի հաստատություններում որդեգրման համար հաշվառված է առանց ծնողական խնամքի մնացած 237 երեխա, փաստում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Երեխաների խնամքի հաստատությունների արագ գնահատում» 2010-ի զեկույցը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լալա Ղազարյանի ներկայացրած տվյալներով՝ 2010-ին որդեգրվել է 120 երեխա, այդ թվում՝ 59-ը՝ ՀՀ քաղաքացիների կողմից: Հաշմանդամություն ունեցող երեխաներ որդեգրում են հիմնականում արտասահմանցիները: 2008 թ. որդեգրվել է 153, 2009-ին՝ 143 երեխա:

Ամեն երեխա կյանքի լավագույն մեկնարկի իրավունք ունի

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Միջխորհրդարանական միության և ՀՀ Ազգային ժողովի համատեղ ջանքերով հունիսի 14-16-ը Երևանում անցկացվեց «Իրականություն դարձնել ամենախոցելի երեխաների իրավունքները» տարածաշրջանային համաժողովը, որին մասնակցում էին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ տասը երկրների 40 խորհրդարանականներ, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի թերևս ամենանշանակալի առաջարկություններից էին՝

➢ ամրապնդել կամ մշակել հատուկ խորհրդարանական մեխանիզմներ՝ երեխայի իրավունքներին արձագանքելու համար, ինչպես նաև աջակցել երեխաների հարցերով օմբուդսմանի ինստիտուտի ստեղծմանը,

➢ որպես գերակայություն ներդրումներ կատարել վաղ մանկության զարգացման ոլորտում, կանխել 0-3 տարեկան երեխաների տեղավորումը խնամքի հաստատություններում,

➢անհապաղ քայլեր ձեռնարկել երեխաների նկատմամբ բռնության վերացման նպատակով:

Համաժողովի եզրափակիչ փաստաթղթում արծարծված այս կոչերին միացան նաև Հայաստանի խորհրդարանի անդամները:

«Մեր առաջնային խնդիրն է երաշխավորել երեխաների իրավունքների պաշտպանությունը և մեր ապագա քաղաքացիների զարգացման համար բոլոր պայմանները ապահովումը»,- նշված է ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ուղերձում, որը համաժողովի բացմանն ընթերցեց ԱԺ փոխխոսնակ Սամվել Նիկոյանը:

Նշենք, որ Հայաստանում մինչև 18 տարեկան երեխաների թիվը մոտ 870 հազար է, այդ թվում՝ մինչև 5 տարեկան փոքրիկները մոտ 200 հազար են: Ցավալի է, բայց մենք դեռևս չենք կարողանում ապահովել մեր երեխաների համար կյանքի լավագույն մեկնարկի իրավունքը. նրանցից գրեթե յուրաքանչյուր երկրորդը մեծանում է աղքատության մեջ:

Ընդունել ենք երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող շուրջ 40 օրենքներ ու իրավական ակտեր, բայց շատ դեպքերում բախվում ենք չգործող օրենքների տխուր ֆենոմենի հետ:

Ստեղծել ենք երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ (ԵԻՊ ազգային հանձնաժողով, բաժիններ մարզպետարաններում ու անչափահասների հարցերով հանձնաժողովներ համայնքներում), որն արդյունավետ չէ, քանի որ արձագանքում է այն ժամանակ, երբ երեխան արդեն հայտնված է կյանքի դժվարին իրավիճակում, մինչդեռ այն պետք է վաղ միջամտության և կանխարգելման մեխանիզմ հանդիսանար...

«Երբ գալիս եմ տուն, ասում է՝ հա ջան, դա՛ եմ սիրում»

Կառլենը միայնակ մոր երեխա է, մայրը Թուրքիայում է, իսկ ազգականները դժվարանում էին ստանձնել նրա խնամքը: Երկու տարի անցկացրեց մանկատանը, բայց այսօր 13-ամյա Կառլենն ապրում է տիկին Սվետայի խնամատար ընտանիքում:

Սկզբում չէր պատկերացնում, թե ինչպիսին կլինի ընտանիքը, որտեղ պետք է ապրի. «Չգիտեի՝ ի՛նչ պիտի անեմ, ո՛նց պիտի ինձ պահեմ, բայց հետո հասկացա, որ շատ լավ եղավ, որ եկա էստեղ: Հիմա ունեմ մայրիկ ու քույրիկ և շատ եմ սիրում նրանց»: Իսկ տիկին Սվետան նշում է. «Կառլենն ամեն օր թարմ ծաղիկներ է բերում տուն իմ և քույրիկի համար, նույնիսկ սովորեցնում է ընկերներին, որ պետք է մայրիկներին միշտ ծաղիկներ նվիրել...»

Հարցրեցինք Կառլենին, թե ի՛նչ է փոխվել նրա կյանքում ընտանիք տեղափոխվելուց հետո. «...Երբ դպրոցից գալիս եմ տուն, բացում եմ դուռը ու կանչում մամայիս, նա ասում է՝ հա ջան, դա՛ եմ սիրում»,- պատասխանում է երեխան:

«Հա ջան...». ընտանեկան հոգածությունը խորհրդանշող սովորական այս բառերին Հայաստանում կարոտ են մանկատներում կամ խնամքի այլ հաստատություններում ապրող մոտ 4000 երեխաներ: Նրանց ավելի քան 80%-ն ունի առնվազն մեկ ծնող և տարբեր հաստատություններում է հայտնվել ընտանիքների սոցիալ-տնտեսական դժվարությունների հետևանքով: Այս երեխաների մեծ մասին ծնողները չեն այցելում, և նրանք երբեք տուն չեն գնում: Առավել խոցելի են հաշմանդամություն ունեցող երեխաները: Հայաստանի խնամքի հաստատություններում ապրող երեխաների 35%-ն ունի մտավոր, ֆիզիկական կամ զուգակցված հաշմանդամություն: Ընդ որում, գրեթե բոլորն ունեն ծնողներ, իսկ հաստատություններում են հայտնվել իրենց հիվանդության պատճառով:

Երեխաների և ընտանիքի պաշտամունքով հպարտացող ազգի համար սա առավել քան ամոթալի վիճակագրություն է:

Երևի թե կարիք չկա որևէ մեկին ապացուցելու, որ երեխայի աճի և զարգացման լավագույն վայրն ընտանիքն է: Երեխայի՝ ընտանիքում մեծանալու իրավունքը ամրագրված է նաև «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում (Հայաստանը միացավ ու վավերացրեց կոնվենցիան 1992-ին) և ՀՀ օրենսդրությունում:

«Խնամատար ընտանիքում երեխայի տեղավորումը ոչ միայն կապահովի երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը, այլև կարող է բյուջեի համար խնայողություն լինել»,- նշում է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Լեյլի Մոշիրին՝ վկայակոչելով իրենց փորձագետների ուսումնասիրությունները, ըստ որոնց՝ երեխային մանկատանը կամ խնամքի այլ հաստատությունում պահելու մեկ տարին արժե միջինը 3600 ԱՄՆ դոլար, իսկ խնամատար ընտանիքում երեխայի պահելը չի գերազանցի 2600 ԱՄՆ դոլարը (մեկ երեխայի համար խնամատար ընտանիքը ստանում է ամիսը՝ 80 հազար դրամ):

Այսօր ՀՀ-ում կա ընդամենը 20 խնամատար ընտանիք, որոնց խնամքի տակ է գտնվում 22 երեխա, իսկ հարյուրավոր երեխաներ շարունակում են իրենց մանկությունն անցկացնել հաստատություններում՝ զուրկ մնալով ընտանեկան ջերմությունից: Եվ դա այն դեպքում, երբ արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումը, մասնավորապես խնամքի հաստատությունների բեռնաթափման ոլորտում: Չնայած դրան՝ շարունակում է ուղղել բոլոր միջոցները, այդ թվում՝ դրամաշնորհները, մանկատները պահելուն, այնինչ ակնհայտ է, որ ավելի նպատակահարմար է ծառայեցնել այդ գումարները սոցիալապես խոցելի ընտանիքների աջակցությանը կամ խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը:

Դա ամենևին էլ չի նշանակում, որ պետք է հրաժարվել մանկատներում և խնամքի այլ հաստատություններում առկա հարուստ մասնագիտական փորձից: Այն պետք է ծառայեցնել համայնքներում ընտանեկան աջակցության այլընտրանքային կենտրոններ ստեղծելուն, որոնք միշտ որակյալ սոցիալական աշխատողների և մանկավարժների կարիք կունենան: Ահա այս տրամաբանությամբ է տանում ՅՈՒՆԻՍԵՖ-ը «Երեխան պետք է ապրի ընտանիքում» իր քարոզարշավը:

Այս համարում զետեղված պատմություններն իրական են, երեխաների անունները և տեղանունները փոխված են:

Յուրաքանչյուր հինգերորդը

Յուրաքանչյուր հինգերորդ երեխան Եվրոպայում սեռական բռնության զոհ է: Անցյալ տարվա նոյեմբերին Եվրոպայի խորհուրդը սկսեց «Յուրաքանչյուր հինգերորդը» տեղեկատվական-լուսավորչական արշավը ընդդեմ երեխաների նկատմամբ սեռական բռնության:

Արշավի նպատակներից է վավերացնել և իրականություն դարձնել 2007-ին Իսպանիայի Լանսարոտե քաղաքում ընդունված **«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին»** Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Հայաստանը ստորագրել է կոնվենցիան 2010-ի սեպտեմբերի 29-ին և առայժմ չի վավերացրել:

Դիրքորոշում

«Գուցե մանկատներին ուղղվող գումարի մի մասը տրվի ընտանիքների՞ն»

«Այն փաստը, որ մեր երկրում մանկատուն կարող են ընդունել երեխայի, ով ունի նույնիսկ երկու ծնող, իսկ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով, այդպիսիք մանկատան երեխաների 43 տոկոսն են կազմում, վկայում է առաջին հերթին ծայրահեղ աղքատության մասին»,- նշում է ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը:

- Այլ կերպ ասած՝ սոցիալական ծանր պայմանների պատճառով երեխան զրկվում է նորմալ մանկությունից: Եթե մանկատներին ուղղվող գումարի թեկուզև մի մասը տրվի այդ ընտանիքներին, ապա հասկանալի է, որ երեխան կմնա ընտանիքում: Չնայած մեզ մոտ, փաստորեն, հակառակ գործընթացն է՝ պետությունը գումար է տրամադրում, որ երեխաները լինեն մանկատներում, ու այդպիսով խաթարում է նրա բարոյաարժեքային ամբողջ համակարգը: Այո՛, թող ասեն, որ շատերը խնամատարությամբ երեխա են ուզում վերցնել նաև շահադիտական նկատառումներով՝ լրացուցիչ եկամուտ ունենալու համար: Սակայն անգամ դա չի արդարացնում երեխաներին մանկատանը պահելու պետության համառ ցանկությունը:

«Երբ ասում են մանկատուն, անմիջապես սարսափի ու անցանկալիության ասոցիացիա է առաջանում»...

«Անկախ այն բանից, թե որքա՞ն գումար է ծախսում պետությունը մանկատների վրա, ցավում եմ, բայց պետք է ասեմ՝ շատ դեպքում դա կորած ներդրում է՝ այդ երեխաների գերակշիռ մասը որպես մարդ ու լիարժեք քաղաքացի չի ռեալիզացվում ու ինտեգրվում հասարակությանը»,- ասում ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

- Կարծում եմ՝ պետական առողջ հայեցակարգի առանցքը պիտի լինի այն, որ ծնողին, ով աշխատանք չունենալու և հանապազօրյա հացի խնդիր լուծելու համար է երեխային հանձնում մանկատուն, որոշակիորեն աջակցություն ցուցաբերվի, այլ կերպ ասած՝ պետությունը կանխարգելի այդ արատավոր երևույթը և ոչ թե հետո ավելի մեծ գումար ծախսի դրա հետևանքները վերացնելու համար: Ես համոզված եմ, որ պետք է հայեցակարգային շրջադարձ կատարենք ու որդեգրենք խնամատարության այնպիսի մոդելներ, որոնք հնարավորություն կտան այդ երեխաներին ընտանիքում դաստիարակվել, այլապես մենք քաղաքացի ենք կորցնում, իսկ մեր ամենաթանկ ռեսուրսը մարդկային ռեսուրսն է:

Առաքելություն

«Վե՛րջ տվեք մինչև 3 տարեկան երեխաներին մանկատներում տեղավորելու պրակտիկային»

«Աշխարհի այլ երկրների համեմատությամբ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ տարածաշրջանի մանկատներում պահվող երեխաների թիվն ամենամեծն է՝ 600 հազար... անկախ բազմաթիվ բարեփոխումներից՝ այս թիվը, ցավոք, մնում է անփոփոխ»,- նշում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ տիկին Լեյլի ՄՈՇԻՐԻՆ:

Մեր զրույցը տիկին Մոշիրիի հետ այս տարվա հունիսին Երևանում անցկացված «Իրականություն դարձնել ամենախոցելի երեխաների իրավունքները» տարածաշրջանային խորհրդարանական համաժողովի արդյունքների մասին է:

- Ընդհանուր առմամբ համաժողովում երկու հիմնական թեմայի ենք անդրադարձել: Առաջինը՝ երեխայի վաղ մանկության զարգացումն ապահովելու հիմնախնդիրն էր, և երկրորդը՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելումը: Կարծում եմ՝ համաժողովը լավ հնարավորություն էր տարբեր երկրների խորհրդարանների անդամների համար փորձ փոխանակելու, ինչպես նաև համախմբելու նրանց ջանքերը երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարելու գործում: Նշեմ, որ տարածաշրջանային ուսումնասիրությունները ցույց են տալիս՝ տասը երեխաներից վեցը ընտանիքներում կարգապահական պատիժների նպատակով բռնության են ենթարկվում:

Վաղ մանկության զարգացման համատեքստում հիմնական գաղափարն այն է, որ որքան շուտ միջամտություն և ներդրում կատարես, հատկապես երեխայի վաղ տարիքում, այնքան հասարակությունը կշահի: Մինչդեռ, ըստ հետազոտությունների, տարածաշրջանի երեխաների 90 և ավելի տոկոսն առաջին անգամ կրթություն է ստանում 6-7 տարեկանում:

Կարծում եմ՝ եթե մասնակիցներն իրենց երկրներ վերադառնալուց հետո նոր եռանդով շարունակեն զբաղվել այս խնդիրներով, ապա համաժողովի աշխատանքը կարելի է հաջողված համարել:

Համաժողովը կենտրոնացավ նաև այն երեխաների խնդրի վրա, որոնք կյանքի ամենավաղ շրջանում տեղավորվում են մանկատներում ու նման այլ հաստատություններում: Դա կյանքի վատագույն մեկնարկն է նրանց համար: Այդ իսկ պատճառով ՅՈՒՆԻՍԵՖ-ը կոչ է անում տարածաշրջանային կառավարություններին դադարեցնել երեխաներին ինստիտուցիոնալ հաստատություններում տեղավորելու պրակտիկան՝ հատկապես մինչև երեք տարեկան փոքրիկներին:

- Գործընկերների հետ միասին պայքարում ենք դրա դեմ և որպես միջոց առաջարկում երեխաներին տեղավորել խնամատար ընտանիքներում: Կարծում եմ՝ խորհրդարաններն այդ իմաստով մեծ անելիք ունեն: Նախ՝ օրենսդրական բազայի մշակման առանցքում պահելով այն գիտակցումը, որ առաջին տեղում պետք է լինի ընտանիքը: Նաև վերահսկելով կառավարության գործունեությունը պետական բյուջեի ծրագրման առումով և օրենսդրական լուծումներ գտնելով սոցիալական պաշտպանության մեխանիզմներն ուժեղացնելու ուղղությամբ, որպեսզի անապահով ընտանիքների երեխաները չհայտնվեն մանկատներում: Ցավալի է, բայց տարածաշրջանային բոլոր երկրների համար երեխաների աղքատությունը իրականություն է, այնպես որ, երեխաների կյանքի բարելավումը շարունակում է մնալ օրակարգային ամենակարևոր հարցը:

Պետք է նշեմ, որ մեր համագործակցությունը Հայաստանի խորհրդարանի հետ միշտ էլ արդյունավետ է եղել: 2009-ին ստորագրվեց Փոխըմբռնման մասին հուշագիրը: Իսկ համատեղ այս համաժողովն էլ, հուսով եմ՝ ավելի մոտեցրեց մեզ:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի խնդիրն է, որ բոլոր երեխաները ծնվեն ու հասակ առնեն իրենց իրավունքները խթանող ու պաշտպանող միջավայրում, և այդ առումով Հայաստանում արդեն իսկ շատ օրենքներ են ընդունվել: Խնդիրն այսօր դրանց կիրառումն է: Դրա հետ մեկտեղ օրենսդրական դաշտը ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն կա: Բացի այդ, օրենքների միջև երբեմն կան հակասություններ, որոնք նույնպես պետք է շտկել: Այստեղ է, որ, հույս ունեմ, կկարողանանք արդյունավետ աշխատել Ազգային ժողովի հետ:

Ո՛չ բռնությանը

«Ապտակը նույնպես բռնություն է»

«Միավորվենք հանուն երեխաների եւ փրկենք ապագան»՝ այսպես է կոչվում «Փրկեցեք երեխաներին» (Save the children) հայաստանյան գրասենյակի կողմից 2009-ին սկիզբ առած եռամյա ծրագիրը: Ինչպես նշեց գրասենյակի տնօրեն Իրինա Սաղոյանը ծրագրի տարեկան հաշվետվության ժամանակ, Հայաստանում երեխաների պաշտպանվածության իրավիճակի գնահատման արդյունքներից պարզ է դարձել, որ նրանք և՛ տանը, և՛ այլ հաստատություններում ենթարկվում են բռնության գրեթե բոլոր տեսակներին՝ ֆիզիկական, հոգեբանական և այլն:

Փոքրիկ Էրիկն ականատես է եղել, երբ մայրը երկու փոքրիկ երեխաներին պատժել է՝ ձմռանը կիսամերկ վիճակում փողոց հանել ու, դուռը փակելով, արգելել տուն մտնել: Փոքրիկների լացն ու անօգնական վիճակն այնքան են տպավորվել, որ հետագայում Էրիկը «Ի՞նչ ես հասկանում բռնություն ասելով» առաջադրանքի ժամանակ հենց այդ տեսարանն է նկարել:

Ծրագրի ղեկավար Աննա Հարությունյանը նշում է, որ հետազոտության արդյունքում պարզվել է, որ մայրերի 70%-ը կիրառում է բռնություն երեխաների նկատմամբ: «Շատերը չգիտեն, որ ապտակը նույնպես բռնություն է: Այն դիտարկվում է որպես դաստիարակչական միջոց, մինչդեռ կան այլընտրանքային լուծումներ»,- նշում է Հարությունյանը՝ ընդգծելով, որ շատ դեպքերում առկա է դրական ծնողավարման հմտությունների պակաս: - Ծնողներից շատերը գիտակցում են, որ վատ են վարվում, սակայն այլ միջոց չեն գտնում:

Սեռական բռնության տեսանկյունից առավել խոցելի են՝ մանկատների և հատուկ դպրոցների երեխաները, հատկապես մինչև 12-13 տարեկանները, որոնք մեծ մասամբ չեն էլ հասկանում, որ սեռական բռնության զոհ են, ասում է Աննա Հարությունյանը:

Նշենք, որ ողջ աշխարհում մանկատներում և խնամքի հաստատություններում բռնությունը վեց անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան ընտանիքներում: Մոտ 4 անգամ ավելի հավանական է, որ նման հաստատություններում ապրող երեխաները ենթակվեն սեռական բռնության, քան այն երեխաները, որոնք խնամվում են ընտանիքում:

«Մանկապիղծների դեմ պետք է պայքարել դրակոնյան մեթոդներով»...

«Բոլորովին վերջերս Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ կողմ քվեարկեց իմ հեղինակած օրինագծին՝ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, որն ուղղված է սեռական ոտնձգությունների հետ կապված հանցագործությունների պատիժները էապես խստացնելուն: Օրինագծին խորհրդարանը քվեարկեց միաձայն՝ 85 կողմ, դեմ և ձեռնպահ չկային»,- ասում է ՀՀ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը:

- Օրինագիծը ներկայացնելիս անդրադարձա վիճակագրությանը. 2000-2010 թթ. ընթացքում, դատական դեպարտամենտի տվյալներով, երեխաների նկատմամբ տեղի են ունեցել 100-ից ավելի սեռական ոտնձգություններ: Նույն տվյալներով՝ 2009-ին դատարաններում քննվել են 18 դատական գործեր, և դրանցից միայն 3-ի դեպքում է նախատեսվել ազատազրկում: Այսինքն՝ մանկապիղծները վճարելով, օրինակ՝ 100 հազար դրամ տուգանք, ինչը նախատեսված է գործող օրենքով, հայտնվել են ազատության մեջ:

Ըստ էության Ազգային ժողովը հավանություն տվեց այն մոտեցմանը, որ սեռական ոտնձգություններ կատարողների դեմ պետք է պայքարել դրակոնյան մեթոդներով: Նոր օրինագծով շատ խիստ պատիժներ են նախատեսվել՝ 8 տարի, 15 տարի ազատազրկում երեխայի նկատմամբ սեռական ոտնձգության ու անառակաբարո գործողության համար: Կարծում եմ՝ նման խստացումը կարող է էական նշանակություն ունենալ այս դատապարտելի երևույթների դեմ պայքարն ուժեղացնելու առումով:

Նշեմ նաև, որ մանկապղծության դեմ պայքարը որոշ երկրներում ուղեկցվում է պատասխանատվության այլ ձևեր սահմանելով: Մասնավորապես, Լեհաստանում, Չեխիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ի ինը նահանգներում զուգահեռաբար կիրառվում է այնպիսի պատժատեսակ, ինչպիսին պարտադիր կամ կամավոր բժշկական կամ քիմիական ամորձատումն է (կաստրացիան): Այսինքն՝ պատիժներն առավել քան խիստ են: Օրինակ՝ Լեհաստանի խորհրդարանը վերջերս՝ 2010-ին ընդունեց այդ մոտեցումը: Կարծում եմ՝ մեր Ազգային ժողովն էլ մանկապղծության դեմ պետք է պայքարի նման մեթոդներով:

Իսկ ո՞վ օգնեց տուժած երեխային

«Նուբարաշենի հատուկ դպրոցում բացահայտված դեպքերի ժամանակ բոլորի ուշադրությունը միայն դատավարությունն էր՝ քանի՞ տարի տվեցին այդ բռնարարին, մանկապիղծին, ամեն ինչ սենսացիայի համար: Կուզես՝ 6, կուզես՝ 16 տարի դատապարտիր, տուժած երեխայի կյանքում ոչինչ չի փոխվում: Իսկ ո՞վ աշխատեց զոհի հետ՝ հոգեբան, սոցիալական աշխատող, երեխայի մեկուսացում այն վայրից, որտեղ դա տեղի է ունեցել, խնամողի փոխարինում, մի խոսքով՝ երեխայի ռեաբիլիտացիա, մենք այդ մասին ընդհանրապես չենք մտածում»...

Միրա Անտոնյան
Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոնի» նախագահ

Խորհրդարանի ամբիոն

«Երեխաների հարցում չկա ընդդիմություն կամ իշխանություն»,

- պնդում են համաժողովի մասնակիցները՝ ներկայացնելով երեխաների իրավունքների պաշտպանության իրենց երկրներում կիրառվող խորհրդարանական մեխանիզմները

«Երեխաներն ամենախոցելի խումբն են, նրանք կախման մեջ են մեզանից՝ մեծերից»

Սերբիայի Հանրապետության խորհրդարանում հիմնվել է մի ինստիտուցիոնալ մարմին, որը զբաղվում է երեխաների իրավունքների և պաշտպանության բոլոր հարցերով, ներառյալ կրթության և ընտանիքի խնդիրները: Սկզբունքային նշանակություն ունի այս մշտական հանձնաժողովի կազմը: Այն միջկուսակցական մարմին է, նրանում ներգրավված են խորհրդարանի յուրաքանչյուր խմբակցությունից պատգամավորներ, բացի այդ, ապահովված է անդամակցության բարձր մակարդակ՝ ի դեմս խոսնակի և փոխխոսնակների: Ներկայացված է նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ը՝ որպես ռազմավարական գործընկեր: Հանձնաժողովի նման կազմը հնարավորություն է տալիս ձևավորել խորհրդարանում երեխաների իրավունքները պաշտպանող պատգամավորների «կրիտիկական զանգված»:

Յուդիտա Պոպովիչ,
Սերբիայի Հանրապետության ԱԺ փոխխոսնակ

«Լսե՛ք երեխաներին»

Եթե ցանկանում ենք օգնել և պաշտպանել երեխաներին, ապա նախևառաջ պետք է լսել նրանց կարծիքը, առաջարկությունները և ապա միայն մշակել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականություն:

Անդրես Զոնսոն,
Միջխորհրդարանական միության գլխավոր քարտուղար

«Ամբողջ կյանքում պայքարել եմ երեխաների իրավունքների համար»

Այսօր միջազգային հանրությունն առաջնահերթ է համարում երեխաների իրավունքների պաշտպանության հարցում մոնիթորինգային մեխանիզմների ստեղծումը: Անհրաժեշտ է ունենալ երեխաների իրավունքների օմբուդսման կամ լիազոր ներկայացուցիչ՝ երեխաների իրավունքների մշտադիտարկման հստակ մանդատով և հատկապես երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին բողոքներ ընդունելու և քննելու իրավասությամբ: Աշխարհի բազմաթիվ խորհրդարաններ հետևում են այս հանձնարարականին:

Թրոնդ Վասագե,
Նորվեգիայի երեխաների իրավունքների նախկին օմբուդսման

«Երեխաների իրավագիտակցությունը բարձրացնող լուրջ արշավ ենք սկսել...»

Այսօր մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում Լանսարոտեի կոնվենցիային, որը մտադիր ենք առաջիկայում Ռադայում վավերացնել: Թեև տարվա ընթացքում մեզանում բացահայտվում է մի քանի հազար երեխաների նկատմամբ բռնության դեպք, սակայն մենք հասկանում ենք, որ դա այս խնդրի իրական ծավալը չէ ավելի քան 40 մլն բնակչություն ունեցող երկրի համար:

Երեխաների նկատմամբ բռնության խնդրի բարդությունն այն է, որ փորձագետների գնահատականներով՝ նման դեպքերի 97%-ը չի արձանագրվում և ոչ մի վիճակագրությունում չի արտացոլվում: Դա թաքցնում են թե՛ ծնողները, թե՛ երեխաները և նույնիսկ վկաները, ուստի մեզանում այսօր այս հիմնախնդրի լուծմամբ կամ կանխարգելմամբ զբաղվող կառույցներից բացի, բավական լուրջ, երեխաների իրավագիտակցությունը բարձրացնող արշավ է անցկացվում և՛ դպրոցներում, և՛ բուհերում:

Այս արշավը նախազգուշացնում է նաև այն ծնողներին, ում «ձեռքերը քոր են գալիս», որ իրենց սպասում են քրեական պատասխանատվություն և օրենքի ողջ խստությունը:

Չեմ կարող չանդրադառնալ նաև զանգվածային մշակույթի կարծրատիպերին, որոնց օգնությամբ այսօր սերմանվում է ագրեսիվ, անբարո, անտաշ վարքագիծ: Այս իմաստով հեռուստատեսությունը կարծես վերածվել է երեխաներին զոմբիացնելու գործիքի: Փաստորեն լիցքավորում ենք մանկությունը ագրեսիվությամբ, իսկ հետո փորձում ենք վերադաստիարակել:

Միկոլա Տոմենկո,
Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահի տեղակալ

Համաժողովի բացումը ՀՀ ԱԺ նիստերի դահլիճում

«Ունենք և՛ դժվարություններ, և՛ ձեռքբերումներ»

Մանկական բժիշկ եմ, 40 տարի աշխատել եմ երեխաների հետ: Տարածաշրջանի բոլոր երկրների նման երեխաների իրավունքների հարցում ունենք և՛ դժվարություններ, և՛ ձեռքբերումներ: Ներառական կրթության համակարգի ներդրումը անշուշտ մեր ձեռքբերումն է, դրանով ցույց տվեցինք, որ չենք ուզում տարանջատել, ասենք, հատուկ կարիքներ ունեցող երեխաների՝ բոլորի հետ միասին կրթություն ստանալու իրավունքը: Մենք նաև հասել ենք այն բանին, որ մինչև 7 տարեկան երեխաների սպասարկումը բուժհաստատություններում անվճար է: Բայց, անշուշտ, դեռ շատ անելիքներ ունենք:

Արա Բաբլոյան,
ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

«Խնամատար ընտանիքների շնորհիվ կարողացանք բեռնաթափել մեր մանկատները»

...Այս ընտանիքներին պետությունն ամեն ամիս երեխային խնամելու համար գումար է վճարում՝ 200 լարի, որը մոտավորապես 140-150 ԱՄՆ դոլարին է համարժեք, իսկ հիվանդ երեխայի համար՝ 300 լարի: Խնամատար ընտանիքները նախօրոք գնահատվում են, որպեսզի երեխաներն ապահով ձեռքերում լինեն: Այդպիսի ընտանիքների շնորհիվ մենք կարողացանք բեռնաթափել մեր մանկատները՝ 5000 երեխաներից այսօր արդեն՝ տարեսկզբի տվյալներով, 1000 երեխա է մնացել մանկատներում: Մանկատներից, որոնք մեզ մոտ մոտ 46-ն էին, հիմա արդեն մնացել են 17-ը: Դրանք ավելի շուտ ճգնաժամային կենտրոններ են, այսինքն՝ փողոցից վերցված երեխաների համար ապաստան: Կարծում եմ՝ մինչև տարեվերջ մեզ մոտ կմնան 2-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, որոնց միանշանակ ոչ ոք չի վերցնում: Իսկ մյուս երեխաները կապրեն այլընտրանքային բնույթի փոքրիկ ընտանեկան մանկատներում, յուրաքանչյուրում՝ 6-7 երեխա: Այս տիպի մանկատների շինությունների գնման գործընթացն արդեն սկսվել է, 34-ն արդեն պատրաստ են երեխա ընդունելու: Մինչև տարեվերջ մեզ մոտ կլինեն մոտ 70 ընտանեկան տիպի մանկատներ:

Օքար Թոիձե,
Վրաստանի խորհրդարանի առողջապահության և սոցիալական հարցերի կոմիտեի նախագահ

Փորձագետ

Ինչո՞ւ է անհրաժեշտ ներդրում կատարել վաղ մանկության ոլորտում

Յուրաքանչյուր մեկ դոլարի ներդրումը այս ոլորտում առնվազն յոթ դոլարի օգուտ է բերում,- նշում են փորձագետները՝ փաստարկելով վաղ մանկության զարգացման կարևորությունը:

Գոյություն ունեն առնվազն հինգ կարևորագույն փաստարկներ, որոնք ապացուցում են վաղ մանկության զարգացման մեջ արվող ներդրումների արդյունավետությունը:

Առաջինը՝ այսպես կոչված նյարդաբանական փաստարկն է՝ ուղեղի զարգացման հետ կապված: Մինչև 3 տարեկանը ուղեղը հավաքում է իր քաշի 80%-ը, այս առումով վաղ մանկության շրջանում իրականացվող ծրագրերն առավել արդյունավետ են, քան հետագայում:

Հաջորդը՝ պետությունը փոքր տարիքի երեխայի վրա ավելի քիչ ծախս է կատարում, քան չափահասի վրա: Իսկ օգուտները վաղ մանկության շրջանում արված ծախսերի նկատմամբ կարող են հասնել 17:1:

Վաղ մանկության շրջանում ներդրումները նպաստում են աղքատության կրճատմանը և անհավասարությունների նվազեցմանը՝ երաշխավորելով յուրաքանչյուր երեխայի համար հավասար և լավ կյանքի սկիզբ:

Բացի այդ, երեխայի խնամքի կազմակերպումը նպաստում է կանանց՝ տնից դուրս աշխատելու հնարավորությունների բարձրացմանը:

Եվ, ի վերջո, վաղ մանկության զարգացման մեջ ներդրումների անհրաժեշտությունը բխում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներից:

Պատրիս Էնգլ,
ԱՄՆ Կալ Պոլի պետական համալսարանի երեխայի հոգեբանության և զարգացման ամբիոնի պրոֆեսոր

Վաղ մանկության զարգացման մեջ ներդրումներ կատարելով՝ դուք կարճ ժամանակից կրթության ոլորտում առաջխաղացում կզգաք, երեխաներն ավելի լավ կսովորեն դպրոցում: Սոցիալական պաշտպանվածությունը ևս կբարձրանա, և, ի վերջո, ավելի երջանիկ երեխաներ և ծնողներ կունենաք: Իսկ ավելի երկար ժամանակում, դուք կստանաք 7-8 անգամ ավելի եկամուտ ներդրված յուրաքանչյուր մեկ դրամի դիմաց: Ես գիտեմ, որ Հայաստանին էլ դա կհաջողվի:

Էմիլի Վարգաս-Բարոն,
Կրթության միջոցով վերակառուցման և միջազգային անվտանգության ինստիտուտի տնօրեն

Հավասարության բանաձև

«Որքան շատ կանայք են ներկայացված խորհրդարանում, այնքան պաշտպանված են երեխաները»

Կարին Ժաբր
Միջխորհրդարանական միության ծրագրերի ղեկավար

Մեր վերլուծությունները վկայում են, թե որքան շատ կանայք են ներկայացված լինում խորհրդարաններում, այնքան հատկապես երեխաների իրավունքների պաշտպանության հարցերն ավելի մեծ կարևորություն են ստանում: Բացի այդ, այն մեխանիզմները, որ ստեղծվում են կանանց իրավունքների համար, դրականորեն են ազդում երեխաների իրավիճակի վրա:

Աշխարհում այսօր կանանց ներկայացվածությունը խորհրդարաններում 19% է, ինչը չի կարելի բավարար համարել: Մենք կարծում ենք, որ խորհրդարանում առանց կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածության ժողովրդավարություն չի կարող լինել: Կանայք խորհրդարան են բերում ոչ միայն իրենց առաջնայնությունները: Փորձը ցույց է տալիս, որ նրանք փոխում են քաղաքական բանավեճերի որակը:

Մարիա Այսինա
Ղազախստանի Մեջլիսի սոցիալական և մշակութային զարգացման հանձնաժողովի անդամ

Այսօր մեր խորհրդարանում 18%-ը կանայք են: Ի դեպ, սոցիալական զարգացման հանձնաժողովում լիակատար գենդերային հավասարակշռություն է՝ 14 պատգամավոր, որոնցից 7-ը տղամարդ և 7-ը՝ կին: Հարցն այն չէ, թե պետք է իր առաջ նպատակ դնել, որ խորհրդարանում ավելի շատ կանայք լինեն, պարզապես իրավիճակն է դա թելադրում. դպրոցներում մեծ մասամբ աշխատում են կանայք, բժիշկների մեծ մասը նույնպես կանայք են, ուրեմն էլ ո՞վ, եթե ոչ կանայք են քաջատեղյակ այս ոլորտների կարիքներին: Էլ չենք ասում, որ կինը ծննդաբերում է, ու նա գիտի, թե ինչ խնդիրների է բախվում ինը ամսվա ընթացքում և այլն: Թեկուզ ես համամիտ եմ համաժողովում հնչած կարծիքին, որ երեխաների դաստիարակության գործում հարկ է նաև հայրերին ներգրավել: Մի քիչ մտածելակերպն է խանգարում, թեև Ղազախստանում այսօր շատ տղամարդիկ երեխայի խնամքի արձակուրդ են գնում ու դա, ըստ էության, արդեն ո՛չ զայրույթ, ո՛չ էլ ժպիտ է հարուցում: Մարդկանց հոգեբանությունը փոխվում է...

Վալենտինա Ստրատան
Մոլդովայի խորհրդարանի սոցիալական պաշտպանության, առողջապահության և ընտանիքի հարցերի հանձնաժողովի անդամ

Որքան խորհրդարանում կանայք շատ լինեն, այնքան մենք ավելի համերաշխ ենք սոցիալական խնդիրներ լուծելիս՝ սա է իմ համոզմունքը:

Սովորաբար, երբ քննարկվում են տնտեսական հարցեր, տղամարդիկ հարմարավետ տեղավորվում են բազկաթոռներում և պատրաստ են այս թեման քննարկել մինչև կեսգիշեր: Հենց քննարկումը վերաբերում է առողջապահությանը կամ կրթությանը, միայն կլսես. «Հերի՛ք է, Վալենտինա, վե՛րջ, անցնում ենք հաջորդ հարցին»: Ու հաճախ հենց մեր համառության շնորհիվ ենք մենք ինչ-որ բանի հասնում: Եթե հարցը վերաբերում է երեխաներին, մենք՝ կին պատգամավորներս, կարող ենք միավորվել և հանդես գալ հանուն հարցի լուծման՝ նույնիսկ հաշվի չառնելով կուսակցական պլատֆորմների տարբերությունները:

Իրավիճակը երեկ եւ այսօր

Երեխաների մոտ 80%-ը մանկապարտեզ չի հաճախում

ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալներով՝ այսօր Հայաստանում գործում են 642 պետական մանկապարտեզներ, որոնցում ներգրավված են 55.711 երեխաներ: Կան նաև 52 մասնավոր մանկապարտեզներ՝ յուրաքանչյուրում միջին հաշվով 42 երեխա է ընդգրկված, ընդ որում, դրանց հիմնական մասը գտնվում է մայրաքաղաքում:

Համեմատության կարգով նշենք, որ 1989-ին Հայաստանում գործում էին շուրջ 1335 նախադպրոցական հաստատություններ, ինչպես նաև գերատեսչական ենթակայության 80 մսուր-մանկապարտեզներ: Նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը հասնում էր մինչև 60%: Այսօր հանրապետությունում նախադպրոցական տարիքի երեխաների միայն 21,6 %-ն է մանկապարտեզ հաճախում, իսկ գյուղական համայնքներում՝ ընդամենը 10,5 %-ը:

Հայաստանի համայնքների մեծ մասում երեխաները զրկված են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Օրինակ՝ Շիրակի մարզի 119 համայնքներից 95-ում մանկապարտեզ չկա: Հանրապետության համայնքների գրեթե կեսում (46%) մանկապարտեզի շենք գոյություն չունի: Ազգային ժողովի ամբիոնից դեռևս մի քանի տարի առաջ հնչեցրած գնահատականների համաձայն՝ 1990-ից ի վեր՝ 10-15 տարվա ընթացքում, Հայաստանում օտարվել էր մանկապարտեզների շենքերի շուրջ 1/3-ը: Թեև 2005-ին «Նախադպրոցական կրթության մասին» օրենքով արգելվեց ՀՀ տարածքում կրթական, նախադպրոցական շինությունների վաճառքը, այնուամենայնիվ մինչ օրս մամուլում շարունակում են ահազանգել մանկապարտեզների շենքերի օտարման հետ կապված դեպքերի մասին:

Եվս 190 համայնքներում մանկապարտեզի շենք կա, բայց չի գործում, գյուղապետներն էլ պատճառաբանում են, որ բավարար ֆինանսական միջոցներ չունեն: «Հետաքրքիր է, որ միջոցների սակավությունը ամենևին էլ չի խանգարում որոշ համայնքապետներին «Մերսեդես» գնել գյուղապետարանի կարիքների համար»,- նկատում է ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը՝ վկայակոչելով Վերահսկիչ պալատի վերջին բացահայտումները:

Կառավարությունը մեծ հույսեր է կապում Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թթ. ռազմավարական ծրագրի հետ, որն ընդունելուց հետո վաղ մանկության զարգացման բոլոր խնդիրները առաջնային են համարվում:

Այս ծրագրի շրջանակներում ԿԳՆ-ը փոխըմբռնման հուշագրեր ունի Հայաստանում ներկայացված գրեթե բոլոր երեխաների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների և նրանց գործընկեր տեղական ՀԿ-ների հետ: Նրանց օգնությամբ որոշակի ձեռքբերումներ են արձանագրվել, սակայն Հայաստանի շատ ու շատ համայնքներում հազարավոր նախադպրոցական տարիքի երեխաներ դեռևս շարունակում են ողջ օրը փողոցում անցկացնել:

Որպես դրական միտում չի կարելի չհիշատակել Երևանի քաղաքապետի որոշումը, ըստ որի մայրաքաղաքի 162 պետական մանկապարտեզները այս տարվա ապրիլից անվճար դարձան: Այն փաստը, որ այս որոշումից հետո երեխաների հոսքը դեպի մանկապարտեզ մեծացավ, ուղղակի ապացույց է, որ սոցիալապես անապահով շատ ծնողներ իրենց երեխաներին մանկապարտեզ չէին ուղարկում հենց վարձի պատճառով:

Բարեփոխման ճանապարհին

«Քայլ առ քայլ» դեպի երեխայակենտրոն հանրակրթություն

Ուլորտի բարեփոխումների թվում է Նախադպրոցական կադրերի վերապատրաստմանը և նախադպրոցական հիմնարկներում երեխաների ներգրավմանն ուղղված ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի և կրթության և գիտության նախարարության համատեղ ջանքերով՝ Համաշխարհային բանկի վարկի շրջանակներում: Մինչ այդ, նրանց գրեթե նույն ձևաչափով համագործակցության արդյունքում կատարվել է ևս մեկ պետական նշանակության ձեռքբերում՝ մշակվել են մինչև վեց տարեկան երեխաների կրթության և զարգացման չափորոշիչները:

Վերապատրաստման ծրագրի փորձնական փուլն իրագործվել էր Շիրակի և Լոռու մարզերում: Անցյալ տարի սկսվեց առաջին փուլը, որի ընթացքում Արարատի և Արագածոտնի 41 համայնքներում նախադպրոցական մասնագետներ վերապատրաստվեցին: Այս տարի ավելացավ ևս չորս մարզ՝ Սյունիքը, Վայոց ձորը, Արմավիրը, Գեղարքունիքը, ընդհանուր առմամբ ծրագրի մեջ ներգրավված է շուրջ 90 համայնք:

«Երևի թե ավելորդ է բացատրել, որ այն երեխաները, ովքեր գնում են դպրոց՝ մանկապարտեզում ուսանելու փորձ չունենալով, ցածր ցուցանիշներ ունեն ոչ միայն գիտելիքների և ուսման նկատմամբ վերաբերմունքի, այլև սոցիալական հմտությունների առումով. կոլեկտիվի հետ շփվելու, ընդհանրապես հասակակիցների հետ հաղորդակցվելու դժվարություններ են ունենում,- ասում է «Քայլ առ քայլ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռուզաննա Ծառուկյանը:

Այս ամենը հաշվի առնելով, նշում է նա, պետությունը նախատեսել է գոնե մեկ տարվա նախադպրոցական կրթություն ապահովել բոլոր 5-6 տարեկան երեխաների համար՝ դրա հնարավորությունը ստեղծելով նույնիսկ այն համայնքներում, որոնցում ընդհանրապես մանկապարտեզ չկա: Նման դեպքերում գործի է դրվում այլընտրանքային մոդելը՝ նախադպրոցական խմբեր են ստեղծվում դպրոցների բազայի վրա:

Եվ այստեղ է, որ հաստատությունների ստեղծման հետ կապված տարբեր խնդիրների հետ զուգահեռ ծագում է նախադպրոցական կադրերի վերապատրաստման հարցը, հատկապես եթե հաշվի առնենք, որ շատ դեպքերում համապատասխան կրթություն ունեցողներ էլ չկան, ինչը զարմանալի չէ համայնքում մանկապարտեզի բացակայության դեպքում:

Կադրերի նախապատրաստումը, Ռուզաննա Ծառուկյանի խոսքով, ընթանում է մի քանի ուղղություններով՝ դաստիարակների և տնօրենների վերապատրաստում, տեխնիկական և խորհրդատվական օժանդակություն, այցելություններ և դասալսումներ տեղերում, վերապատրաստվողների այցեր կազմակերպության ստեղծած 11 մոդելային ուսուցման կենտրոններ՝ փորձի փոխանակման նպատակով:

Առանձնակի ուշադրություն է դարձվել ծնողների հետ համագործակցությանը, չէ՞ որ երեխայի դաստիարակության հարցում մանկապարտեզը և ընտանիքը պետք է միասնական լինեն: «Երբեմն հանդիպումների ժամանակ ծնողներն այնքան հարցեր էին տալիս, որ զրույցն ակամայից վերածվում էր փոքրիկ սեմինարի»,- ասում է ծրագրի ղեկավարը:

Կազմակերպությունը մեծ փորձ ունի ծնողներին օժանդակելու հարցում: Մի քանի տարի առաջ ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ պատրաստել և հրատարակել է «Այնքան ծանոթ և անծանոթ մեր երեխան» ձեռնարկը ծնողների համար: Կարդալով այն՝ համոզվում ես, որ երեխայի լավագույն պաշտպանը ոչ թե նրա իրավունքների գծով լիազոր պաշտոնյան է, այլ ծնողը, որին անհրաժեշտ է կրթել և սովորեցնել:

Օգնության ձեռքը

«Մեկ-մեկ տանն էլ եմ հաց ուտում»...

- Մեր շահառու ընտանիքների 90%-ը կա՛մ ամուսնալուծված է, կա՛մ միայնակ մայր, կա՛մ էլ հայրը հարբեցող է,- ասում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանի սոցիալական հոգածության կենտրոնի տնօրեն Սեդա Ղալթախչյանը:

2006 թ.-ից գործող կենտրոնն ամեն օր ընդունում է 6-18 տարեկան անապահով ընտանիքների երեխաների: Հաստատությունը ֆինանսավորում է պետությունը, այն նախատեսված է 100 երեխայի համար, որոնցից միայն 35-ին է հատկացված ճանապարհածախս, նրանց համար, ովքեր կենտրոն հասնելու համար պետք է օգտվեն տրանսպորտից: Տնօրենը պատմում է, որ շատ հաճախ երեխաները, ստանալով ճանապարհածախս, տուն են գնում ոտքով, իսկ այդ գումարով իրենց համար բուլկի կամ պաղպաղակ են գնում:

Կենտրոնն աշխատում է ոչ միայն երեխաների, այլև ծնողների հետ՝ նրանց տրամադրելով հոգեբանի և իրավաբանի օգնություն:

- Այս երեխաներից շատերը հոգեբանական լուրջ օգնության կարիք ունեն, ընկճված են, կաշկանդված, անվստահ: Դրա համար էլ այստեղ ոչ մեկը ձայնը չի բարձրացնում երեխայի վրա, ամեն ինչ երեխաներին բացատրվում է, իսկ վիրավորելը բացառված է, առանց այն էլ այս երեխաները վիրավորված են:

- Երեխաները ոչ միայն սոցիալական վիճակից, այլև իրենց ծնողների պահվածքից են շատ ամաչում,- շարունակում է տիկին Սեդան՝ պատմելով, որ երբեմն այնպիսի դեպքերի է առնչվել, որոնց այլ պարագայում երբեք չէր հավատա:

- Ունենք ծնող, ով ուզում է ամեն կերպ ապացուցել, որ իր երեխան հոգեկան հիվանդ է և պահանջում էր տեղավորել գիշերօթիկում: Տարանք հոգեբույժի մոտ, պարզվեց՝ երեխան առողջ է:

Տնօրենի խոսքով՝ երբեմն մարդկանց սոցիալական ծանր վիճակը հասնում է ծայրահեղության.

- Մի քանի օր առաջ ճաշարանի դռան մոտ տեսա Արտակին, ով անհանգիստ պտտվում էր այս ու այն կողմ: Պարզվեց՝ տղան սոված էր: Երբ նրանք ճաշել էին, ու բավական ժամանակ էր անցել, ես նրան նորից տեսա ճաշարանի մոտ: Նորից հաց տվեցինք, և հարցրեցի, թե այսօր ի՞նչ է կերել: Պատասխանից զարմացած եմ մինչև հիմա.

- Մեկ-մեկ էլ տանն եմ հաց ուտում, իսկ այսօր չեմ կերել...

Ներառական կրթություն

«Կրթություն բոլորի հետ միասին և բոլորի հետ հավասար»

Հայաստանում ներառական կրթության ոլորտում սկիզբը դրվել է 2001-ին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գաղափարով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրով, որը պետական կառույցի, տեղական ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների արդյունավետ համագործակցության լավագույն օրինակ էր: Ներառական կրթության զարգացման և կայացման համար մշտական աջակցություն են ցուցաբերում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, ՕՔՍՖԱՄ «Նովիբ» հիմնադրամը, «Առաքելություն Արևելք», «Վորլդ վիժն» և այլ միջազգային կազմակերպություններ:

«Կրթություն բոլորի հետ միասին և բոլորի հետ հավասար. այս գաղափարն է ընկած ներառական կրթության հիմքում»,- նշում է «Հույսի կամուրջ» կազմակերպության նախագահ Սուսաննա Թադևոսյանը: Նրա խոսքով՝ աշխարհում ներառական կրթության շարժումը սկսել է դեռևս նախորդ դարի 70-ականներից հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների նախաձեռնությամբ:

Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձ, և այն դարձրել է պետական քաղաքականության կարևոր մասը:

ԿԳՆ վերջին տվյալներով՝ Հայաստանում գործում են 62 ներառական դպրոցներ, որոնցում սովորում են հատուկ կրթական կարիքներ ունեցող մոտ 1700 երեխաներ: Ընդ որում, Տավուշի մարզում ներառական կրթությունը իրականացվում է բոլոր դպրոցներում:

Դրա հետ մեկտեղ ավելի քան կիսով չափ նվազել է հատուկ դպրոցների թիվը՝ նախկին 44-ի փոխարեն այժմ մնացել են միայն 17-ը:

Այս գործընթացի տրամաբանական ավարտը կլինի «Կրթությունը բոլորի համար», այսինքն՝ ի վերջո, ներառական կրթությունը կներդրվի բոլոր դպրոցներում, իսկ հատուկ դպրոցները կվերանան:

Հարց

2011-ի հունվարի 1-ի դրությամբ՝ հաշվառված են հաշմանդամություն ունեցող 8045 երեխաներ:

Հատուկ դպրոցներում սովորում է մոտ 2800 երեխա, որոնցից 1250-ը հաշմանդամության կարգ ունեն, ներառական կրթության համակարգում ընդգրկված են 1700-ը, մանկատներում՝ 461-ը: Հարց է ծագում. ի՞նչ են անում մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող մյուս երեխաները: Ստացե՞լ են որևէ կրթություն և եթե նույնիսկ այո, ինչպե՞ս է դասավորվում նրանց հետագա կյանքը:

Համարը պատրաստեցին
Լիլիթ Քոչինյանը, Կարինե Պետրոսյանը, Արման Ղարիբյանը, Լիա Խոջոյանը, Համիկ Հարությունյանը, Սուսաննա Հովհաննիսյանը, Կարինե Ամիրխանյանը
Շնավորումը՝ *Յուրի Կարապետյանի*

unicef

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com

Տպաքանակը՝ 5000